Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

05 նոյեմբերի 2024 թվական

ք. Մեծամոր

«ՀԱԷԿ» ՓԲԸ գլխավոր տնօրեն Է. Մարտիրոսյանս ծանոթանալով «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-163/24» ծածկագրով հրապարակված գնման ընթացակարգին

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

«ՀԱԷԿ» ՓԲԸ կարիքների համար անձեռոցիկի ձեռքբերման նպատակով 2024 թվականի հոկտեմբերի 10-ին հրապարակվել է «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-163/24» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետ՝ ընթացակարգ): Ընթացակարգին, ի թիվս այլ մասնակիցների, մասնակցության հայտ է ներկայացրել նաև «Էլաքսի» ՍՊ ընկերությունը, վերջինս համարվել է նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

«Էլաքսի» ՍՊԸ-ն, «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-163/24» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերին համապատասխան, իր դիմում-հայտարարությունում հայտարարել և հավաստել է՝ ««Էլաքսի» ՍՊԸ-ն և իրեն փոխկապակցված անձիք բավարարում են ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-163/24 ծածկագով ընթակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին...»:

«Էլաքսի» ՍՊԸ-ն ընդգրկված է «գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներին փոխկապակցված անձանց վերաբերյալ» ցուցակում, որի համաձայն «Էլաքսի» ՍՊԸ հանդիսանում է «ԷՄ-ԷՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի հետ փոխկապակցված անձ:

«ԷՄ-ԷՏ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն 06.01.2023 թվականից մինչև 06.01.2025 թվականը ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ըստ, ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի (Գնումների գործընթացի կազմակերպման կարգ) 32-րդ կետի 1-ին մասի բ ենթակետի՝ «մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ հրավերով սահմանված մասնակացության իրավունքի պահանջներին, իր և իրեն փոխակապակցված անձանց համապատասխանության մասին»:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի.

ՈՐՈՇԵՑԻ

1. «Էլաքսի» ՍՊ ընկերությանը ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում երկու տարի ժամկետով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ՀՀ Ֆինանսների նախարարությանը և մասնակցին տրամադրելու օրվանից:
3. Որոշումը կայացնելու հաջորդող օրը այն տրամադրել ՀՀ ֆինանսների նախարարությանը և «Էլաքսի» ՍՊԸ -ին:

Գլխավոր տնօրեն **Է. Մարտիրոսյան**